ԷԲԹԵՍԱՄ ՓԱԺՈՒՀԱՆԴԵՀ
EBTESAM PHAZHUHANDEH

ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՆՔՆԱԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Անձի մասնագիտական կայացումը հոգեբանական տեսանկյունից ներկայացնում է մարդու անհատական առանձնահատկություններով պայմանավորված ներքին պոտենցիալի իրացում: Ինքնիրացման համար հիմք են ծառայում նաև մասնագիտական ընտրությունը և կողմնորոշումը, ինչն ուղեկցվում է գործունեության հանդեպ ձևավորված վերաբերմունքով: Այս ամենի հիմք են ընդունակությունները, անձնային գծերը, հետաքրքրությունները, հակումները և այլն: Ինքնաիրացումը, որպես հոգեբանական հիմնախնդիր, առաջին հերթին ենթադրում է կենսագործունեության ոլորտներում զարգացման տարբեր մակարդակների նվաճում, անձնային աճ և հասունություն, որի համար նշանակալի դեր են խաղում անձնային գծերը [8, 5]: Անձի ուսումնասիրման վերլուծությունները, կոնցեպտուալ մոտեցումներն ու տեսակետները բազմազան են և բազմաբնույթ: Անձնային առանձնահատկությունների, անձնային գծերի հետազոտմամբ հիմնականում զբաղվել են Հ. Օլպորտը, Հ. Այզենկը և Ռ. Կեթեելը: Վերջինս անձի կառուցվածքը ներկայացնում է լայնածավալ հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա և եզրակացնում է, որ անձը հանդիսանում է առանձին ելքային որակների կազմավորում: Ըստ նրա կան 16 որակներ, որոնք հանդես են գալիս իրարից հարաբերական անկախ, և դրանք առանձին անձանց մոտ հանդես են գալիս տարբեր համադրումներով [3]: Անձնային որակների շարունակական հետազոտությունների վերլուծությունների արդյունքում Ռ. Քեթեելի կողմից հաշվարկվել և դուրս են հանվել անձնային երկրորդային գործոնները, որոնք ներկայում խմբավորվում են Մեծ Հնգյակի կոնցեպցիայի շրջանակներում: Որպես Մեծ Հնգյակի առաջին գործոն հանդես է գալիս էքստրավերտությունը, որն իր մեջ ներառում է A (Մարդամոտություն), E (Իշխելու հակում), F (Խմպուլսիվություն), H (Քաջություն), Q2 (Ինքնուրույնություն) գործոնները: Որպես Մեծ Հնգյակի երկրորդ գործոն Ընկերասիրությունն է, համապատասխանաբար E (Իշխելու հակում), L (Կասկածամտություն), M (Երազկոտություն), Q1 (Ճկունություն) և Q2 (Ինքնուրույնություն) գործոններով: Գիտակցականությունը հանդիսանում է երրորդը, A (Ինքնամփոփություն), I (Դաժանություն) և M (Գործնականություն) գործոններով: Չորրորդ գործոնը Մեծ

Հնգյակում Հուզականությունն է, համապատասխանաբար C (հուզական անկայունություն), H (Երկչոտություն), L (Կասկածամտություն), O (Տագնապայնություն), Q3 (Վարքի ցածր հսկողություն) և Q4 (Լարվածություն) գործոններով: Վերջին գործոնը Ինտելեկտն է B (Բարձր ինտելեկտ), M (Երազկոտություն), Q1 (Ճկունություն) գործոններով: Անձնային բնութագրերն ըստ առաջնային գործոնների ներկայացվում են մի քանի ոլորտներով. շփման ոլորտ, հուզակամային և ինտելեկտուալ [4]:

Անձը ճանաչելի է իր բնավորությամբ, որը սահմանվում է որպես անձի համեմատաբար կայուն, էական առանձնահատկությունների համադրում, ինչը դրսևորվում է նրա վարքում՝ ըստ որոշակի վերաբերմունքի. դեպի սեփական անձը և դիմացինը, դեպի գործը և դեպի դժվարությունը: Առաջինը կապված է ինքնաճանաչման, ինքնազնահատման և ինքնաքննադատման հետ: Երկրորդը՝ եսակենտրոնության, խմբում դրսևորվելու հետ: Երրորդը՝ աշխատասիրությունն է, նպատակասլացությունը և վերջինը՝ պատասխանատվությունն ու կամային որակները: Բնականաբար նշվածները հանդես չեն գալիս իրարից լրիվ անկախ, առանձնացված որակներով [5; 2]: Անձնային գծերը նրանք են, որոնք չեն կարող հետազոտվել համեմատության մեջ: Դրանք անձի կառույցի այն նեյրոհոգեկան տարրերն են, որոնք կառավարում և ուղղորդում են անձի հարմարողական վարքը, այսինքն դրանք այն գծերն են, որոնցով դրսևորվում է անձի յուրահատկությունը: Բնականաբար, անձի զարգացման մեջ դրանք հանդիսանում են կարևորագույն նախադրյալներ ապագա ինքնիրացման համար:

Մեր կողմից իրականացված հետազոտությունում, որն անցկացվել է Իրանի Սպահան և Լորեստան քաղաքների հանրակացարաններում, փորձել ենք ուսումնասիրել կրթական միջավայրում երիտասարդների մոտ հոգեբանական այնպիսի որակների դրսևորումները, որոնց օգնությամբ կարելի է ապահովել անձնային աճը ինքնիրացման ճանապարհին: Քանի որ հետազոտվել են ինչպես տեղաբնակ, այնպես էլ ոչ տեղաբնակ վաղ երիտասարդ տարիքում գտնվողները, առավել կարևոր ենք համարել գտնել հոգեբանական տեսանկյունից կարևորվող այնպիսի անձնային որակներ, որոնք ունեն փոխպայմանավորվածություն ինքնիրացման բաղադրիչների հետ ոչ տեղաբնակների մոտ: Բնական է, որ այդ հոգեբանական որակները նպաստում են նաև ինքնաճանաչման ճանապարհով հասնել հոգեբանասոցիալական հարմարմանը: Հետազոտության ընտրանքը կազմել են Սպահան և Լորեստան քաղաքների հանրակացարանում ապրող 50 ոչ տեղաբնակ ուսանողներ (25 աղջիկ և 25 տղա), որոնք ունենցել են հոգեբանական ծանրաբեռնվածություն, տագնապի և լարվածություն զգացողություններ: Համեմատական հետազոտություն անցկացնելու համար կազմել ենք նաև ստուգիչ խումբ ևս 50 (25 աղջիկ և 25 տղա) ուսանողների, որոնք եղել են տեղաբնակներ և առանձնակի չեն

ունեցել հոգեբանական ապրումներ և խնդիրներ պայմանավորված իրենց կեցության և մասնագիտական գործունեության, կրթության հետ: Հետազոտության արդյունքների վերլուծությունները ցույց են տվել, որ աղջիկների մոտ ավելի տատանվող է ինքնագնահատականը, այն ավելի միտված է բարձր լինելու: Հաղորդակցման և շրջապատի նկատմամբ վստահության գործոնները միջին արտահայտվածություն ունեն: Նրանց մոտ նկատելի է նաև հուզական կայունություն, հավասարակշռվածությունը և պատասխանատվություն: Ինչպես տղաները, այնպես աղջիկները ունեն վարքի հսոդության բարձր միտումներ, աղջիկները չեն զիջում իրենց ակտիվությամբ, համարձակությամբ և սոցիալական փոխհարաբերություններում ճկունությամբ:

Ոչ տեղաբնակ աղջիկ ուսանողների մոտ ի տարբերություն ոչ տեղաբնակ տղա ուսանողների ավելի արտահայտված են տագնապայնությունը (O) և լարվածությունը (Q4): Նրանք ավելի արագ են ունենում հուսալքության ապրումներ, հոգնածության և պասիվության դրսևորումներ: Տղաների մոտ ի տարբերություն աղջիկների ավելի արտահայտված են շփվողականությունը (մարդամոտություն) (A), հուզական կայունությունը (C): Տղաների և աղջիկների միջև տարբերություններ չեն գրանցվել ինքնագնահատականի (MD), իտելեկտի (B), իմպուլսիվության (F), բարեխղճության (G) և երագկոտության (M) գործոններում:

Ստուգիչ խմբերի տղաների տեղաբնակ ուսանողների մոտ կայուն բարձր է ինքնագնահատականը և ավելի կարգավորված վարքի վերահսկողությունը: Նրանց մոտ ինտելեկտի գործոնը նույնպես ունի միջին մակարդակ: Ինչ վերաբերում է տագնապայնության և լարվածության ցուցանիշների, ապա ստուգիչ խմբի տղաների մոտ դրանք բավականին ցածր են: Հատուկ ուշադրության է արժանի ստուգիչ խմբի երիտասարդների ինքնուրույնության գործոնին, որն ավելի ցածր է քան հիմնական խմբի տղաների մոտ: Սա կարող է պայմանավորված լինել նրանց հարազատների և ընտանիքի կողքին լինելու հանգամանքով: Իսկ ոչ տեղաբանակների մոտ մի փոքր բարձր է, բայց ընդհանուր ունի թույլ արտահայտվածություն:

Ընդհանրացնելով անձնային հարցարանից ստացված արդյունքները, կարող ենք ասել, որ տեղաբանակ և ոչ տեղաբնակ ուսանողների մոտ էական տարբերություններ նկատելի են հուզական ոլորտում: Ոչ տեղաբնակ ուսանողների հատկապես աղջիկների մոտ արտահայտված են տագնապայնությունը և լարվածությունը: Իսկ ընդհանուր նմանությունների մեջ կարող ենք նշել, որ ուսանողներին բնորոշ են վարքի վերահսկողությունը, բարեխղճությունը և ադեկվատ ինքնագնահատականը: Ընդհանուր նույնն է նաև նրանց ինտելեկտի մակարդակը, որը ունի միջին արտահայտվածություն: Անձի ինքնիրացման գործոնների միջին ցուցանիշները գրեթե նույնանման են արտահայտված նաև ոչ տեղաբնակ աղջիկ ուսանողների հետազոտական խմբում: Նրանց նույնպես բարձր են արտահայտված արժեքների,

ստեղծարարություն և ինքնահամակրանքի գործոնները: Ինքնահամակրանքը այս մեթոդիկայի մեջ հոգեկան առողջության և անձի արժեքային կայունության չափող գործոն է, սթափ գիտակցության, <Ես - կոնցեպցիայի> համապատասխան կարևոր չափորոշիչ և ծառայում է որպես աղեկվատ ինքնագնահատականի հիմք: Ի տարբերությունը ոչ տեղաբանակ տղաների նրանց մոտ ավելի կայուն են արժեքները ավելի բարձր են արտահայտված հայացք մարդու էությանը, ստեղծարարությունը և հաղորդակցման ճկունությունը և շփվողականությունը: Համեմատելով ստուգիչ երկու խմբերի տղաների և աղջիկների անձի ինքնիրացման թեստի արդյունքները, կարող ենք նշել հետևյալ առանձնահատկությունները.

1. Կողմնորոշում ժամանակում գործոնը ավելի բարձր է տղաների մոտ, բայց այնուամենայիվ ունի միջին արտահայտվածություն,
2. Արժեքների նկատմամբ վերաբերմունքի և դրանցով վարքի կարգավորման ցուցանիշները բարձր էին բոլոր խմբերում,
3. Ստուգիչ խմբի տղաների մոտ ավելի բարձր է արտահայտված հայացք մարդու էությանը գործոնը, քան աղջիկների մոտ,
4. Իմացական պահանջմունքներում և ստեղծարարության մեջ տարբերություններ չեն գրանցվել,
5. Ինքնավարության և ինքնաբերականության հարցերում նույնպես աղջիկները ունեն ավելի ցածր ցուցանիշներ, քան տղաները,
6. Շփվողականության և հաղորդակցման մեջ ճկունության գործոններում տղաները ցուցաբերում են ավելի ազատություն, քան աղջիկները, չնայած որ ընդհանուր երիտասարդության շրջանում նկատելի է հաղորդակցման ցածր մակակարդակ:

Ընդհանրացնելով թեստային մեթոդներից ստացված արդյունքները կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ Իրանի Սպահան և Լորեստան քաղաքներում սովորող տեղաբնակ և ոչ տեղաբնակ ուսանողների մոտ առկա են հոգեբանական մի շարք դժվարություններ, որոնք պայմանավորված են նրանց անձնային գործոնների դրսևորման: Առանձնակի կարող ենք ասել, որ ընդհանուր երիտասարդների մոտ ցածր է ինքնուրույնությունը, ինքնաբերականությունը և ճկունությունը: Հատկապես ոչ տեղաբնակ ուսանողների մոտ նկատելի է տագանապայնության, հոգեբանական լարվածության դրսևորումներ: Ոչ տեղաբնակ ուսանողների մոտ ավելի բարձր է իմացության պահանջմունքները և նպատակաուղղված վարքը: Ընդհանուր կարող ենք նշել նաև, որ երիտասարդների մոտ բարձր է վարքի վերահսկողությունը, որոնք արտահայտվում են արժեքների և սոցիալական նորմերի բարձր պահպանողականությամբ:

Դիտարկել ենք հետազոտվող գործոնների միջև փոխհարաբերակցությունները, միջնորդավորվծ և ոչ միջնորդավորված կապերը: Փոխկապակց-

վածությունները հաշվարկվել են Պիրսոնի գծային կոռելյացիոն վերլուծության բանաձևով, հետազոտվողների քանակը եղել է յուրաքանչյուր խմբում 50 (25աղջիկ, 25 տղա), հավաստիությունը 0.05, թույլատրելիության գործակիցը 0.34: Անձնային գործոնների միջև փոխկապակցվածությունը հիմնական խմբում ցույց տվել, որ ինտելեկտի (B) և նրբազգացության (I) փոփոխականների միջև առկա է ուժեղ դրական կապ (r= 0,406), (P< 0,01,): Այս կապը արտահայտվում նրանով, որ ինչքան բարձր են անձի ողջամտությունը, իրատեսությունը, սթափ մտածողությունը և ինքնավստահությունը, այնքան ինտելեկտուալ կարողություններում մեծանում է մտքի ճկունությունը, տրամաբանական դատողությունները: Հիմնական խմբի երիտասարդների մոտ անձնային գործոնների և ինքնիրացման գործոնների միջև նույնպես դիտարկվել է փոխհարաբերակցություն: Հիմնական խմբի երիտասարդների մոտ ինքնագնահատականի և ինքնահամակրանքի միջև առկա է ուժեղ դրական կապ (r=0,406), ինչը վկայում է այն փաստը, որ ինչքան կայուն է ինքնագնահատականը, այնքան կայուն է ինքնահամակրանքի գործոնը, որն ապահովում է անձի ինքնահաստատումը միջավայրում: Փոխհարաբերակցություն է առկա նաև կողմնորոշում ժամանակում և մարդամոտության (r=0,0397), հուզական կայունության (r=0,345), ինքնավստահության (r=-0,443) գործոնների միջև: Ուշադրության է արժանի իմացության պահանջմունքի և հուզական կայունության միջև (r=0,360): Սա խոսում է այն մասին, որ ինչքան բարձր է հուզական կայունությունը, այնքան ավելի կայուն է իմացության պահանջմունքները: Հիմնական խմբի երիտասարդների մոտ նկատելի է նաև ճկունության և ինքնաբերականության միջև կապ (r=0,335): Ստուգիչ խմբում տեղաբանակ երիտասարդների մոտ անձնային գործոնների և ինքնիրացման փոփոխականների միջև նույնպես կատարվել է կոռելյացիոն վերլուծություն: Տեղաբանակ երիտասարդների մոտ ի տարբերություն ոչ տեղաբանակների ինքնագնահատականը փոխպայմանավորված է արժեքային համակարգով և հայացք մարդու էությանը, ինքնուրույնության գործոններով, որոնք խոսում են անձնային աճի բավականին կայուն մակարդակի մասին: Տեղաբանակ երիտասարդների մոտ իմացության պահանջմունքը նույնպես կոռելացվում է հուզական կայունության հետ, բայց միևնույն ժամանակ ուղղորդվում է ինքնաբերականության և ինքնահամակրանքի գործոններով: Իշխանության ձգտման և արժեքային համակարգի միջև գոյություն ունի ուժեղ բացասական կապ (r=-0,529), ինչը խոսում է այն մասին, որ ինչքան բարձր են արժեքները, այնքան ցածր է դրսևորվում այլ մարդկանց նկատմամբ իշխանության ձգտումները: Իսկ մեր հետազոտվող խմբերում արժեքային համակարգը բավականին կայուն ձևավորված է: Ինքնահամակրանքի և շփվողականության հետ է փոխհարաբերակցվում բարեխղճության գործոնը:

Հետազոտության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ ուսանողների մոտ վաղ երիտասարդական տարիքը բնորոշվում է անձնային

այնպիսի գործոններով, ինչպիսիք են վարքի հսկողությունը, բարեխղճությունը, աղեկվատ վերաբերմունքը և շփվողականությունը: Ինչպես տեղաբնակ, այնպես էլ ոչ տեղաբնակ երիտասարդների մոտ իմացության պահանջմունքի բավարարումը և կողմնորոշումը փոխպայմանավորված է հուզական կայունության ցուցանիշով: Սակայն ոչ տեղաբնակների մոտ այն ուղեկցվում է նրբազգացության, բարեխղճության և պատասխանատվության ցուցանիշների դրսևորմամբ, իսկ տեղաբնակների մոտ կրեատիվության և հաղորդակցման ցուցանիշներով: Երիտասարդների մոտ նոր կրթական միջավայրում ինքնիրացման բաղադրիչներից կարևորվում են կայուն ձևավորված արժեքները, իմացության պահանջմունքը, կրեատիվությունը և ինքնահամակրանքը:

Գրականություն

1. Allport G. Pattern and Growth in Personality, 1973. 194p.
2. Anastasi, A. (1998). Intelligence as a quality of behaviour. In R.J. Sternberg, & D.K. Detterman (Eds.), What is intelligence? Contemporary viewpoints on its nature and definition Norwood, NJ: Ablex 19-21pp.
3. Cattell, H. E. P., & Mead, A. D. (2008), "The Sixteen Personality Factor Questionnaire (16PF)". The Sage Handbook of Personality Theory and Assessment: Personality measurement and Testing. (vol. 02)., eds. Boyle, I.G. & Matthews,G. & D. H. Saklofske, Sage Publications, Los Angeles, pp. 135-178
4. Cattell, H.E.P. (1996). The original big-five: A historical perspective. European Review of Psychology, 46(1), 5-14 pp.
5. Frager R., Fadiman J. (2002) Personality & Personal Growth, Published by Person Education, Inc. Upper Saddle River, New Jersey 07458, 700p.
6. Kafi Seyed Musa, Bolhari Jafar, Peiravi. (1998). The study of relation of academic achievement and psychological health of university students. Thought and behavior Quarterly. 3-rd year. Vol.4, 59-66.
7. Mohammad H.H. A Study on the Relation Wetween emotional intelligence and psychological health among university students //Internation Scientific Conference <The Current Issues in Theoretical and Applied psychology>, Y., Oct. 28-30, 2011, 118-120pp.
8. Richard M. Ryckman (2007) Theories of Personality, 9th edition, Thomson/Wadsworth, 711p.

THE ROLE OF THE PERSONAL FACTORS IN THE PROCESS OF SELF-REALIZATION AMONG YOUNG

In the article the problem of characteristic of person which are influence on the self – realization was discussed. Personal factors coming from person's character submitted in sphere of communication, emotional and intellectual fields. In the process of self- realization the big role have a professional selection and orientation. In the article also given a comperativ analysis between the personal factors among local and non-local student. In Iran the components of self – realization in the new educational environment includes stability developed values, need for knowledge, creativity and self – percapition.